**Արձանագրություն N 2-1**

**<<ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/2>> ծածկագրով համակարգիչների ձեռքբերման**

**գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 19.08.2021թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Սարիբեկյան

Լ. Խալաթովա

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլյան

## 1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

---

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Հայտերի ներկայացման վերջնաժամկետը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում սահմանվել է մինչև 18.08.2021թ. ժամը 11:00-ն: Ընթացակարգի հակադարձ աճուրդը կայացել է eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 19.08.2021թ. ժամը 11:00-ին:

գ) Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

դ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի |
| 2 | «Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

## 2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

---

(Տ. Ղուկասյան)

Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգի կողմից ավտոմատ եղանակով ներկայացրած աճուրդի արդյունքների համաձայն՝ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները՝

*ՀՀ դրամ*

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի | 1340000 | 1110000 | 20 % | 1332000 | 1110000 | 20 % | 1332000 | - |
| | 2 | «Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ | | 1500000 | 0 % | 1500000 | 1500000 | 0 % | 1500000 | Մերժված |
| 2 | 1 | Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի | 2400000 | 1925000 | 20 % | 2310000 | 1925000 | 20 % | 2310000 | - |

| Չափ-աբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 2 | 2 | «Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ | | 2650000 | 0 % | 2650000 | 2650000 | 0 % | 2650000 | Մերժված |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**3.Հայտերի գնահատման և նիստի կասեցման մասին**

(Տ. Ղուկասյան)

Քանի որ «Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ-ի ներկայացրած գնային առաջարկները 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գերազանցում են նախահաշվային արժեքը, համակարգն ավտոմատ եղանակով մերժել է մասնակցի հայտը:

Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրում առաջարկվող ապրանքը: Անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի պարամետրերը և արտադրողը:
- Բացակայում է սպասարկման կենտրոնի գտնվելու վայրի, ինչպես նաև ապրանքի չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ լինելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

(Տ. Ղուկասյան)

4.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 23.08.2021թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------------------------------------- Լ. Սարիբեկյան

---------------------------------------- Լ. Խալաթովա

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ն. Նիկոլայան